

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԱՆՆԱ ԵՐԿԱՆՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի ավագ դասախոս, ք.գ.թ.

Բանալի բառեր՝ հայերեն, բանավոր խոսք, կապակցված խոսք, հաղորդակցում, ավանդական մեթոդներ, ակտիվ մեթոդներ, հմտություն:

Լեզուն հասարակական երևույթ է, ծառայում է հասարակությանը որպես հաղորդակցման միջոց: Խոսքը լեզվի անհատական դրսևորումն է, այն մշտապես զարգանում և փոփոխվում է: Մարդու խոսքային հմտությունները ներկայացնում են նրա մտավոր կարողություններն ու ունակությունները: Խոսքի միջոցով մարդն ինքնադրսևորվում է, արտահայտում ոչ միայն իր մտքերն, այլև զգացմունքներն ու ապրումները: Պետք է փաստել, որ բոլոր ժամանակներում խոսքը զորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Ժամանակակից գլոբալացված աշխարհում արդյունավետ հաղորդակցվելու կարողությունը գնալով ավելի պահանջված է դառնում: «Քաղաքակիրթ բիզնեսով զբաղվելու կարևոր նախապայմաններից է հաղորդակցման հմտությունների առկայությունը: Ձեռնարկությունների հաջողությունները մեծապես կախված են հաղորդակցման գործընթացի ճիշտ կազմակերպումից»¹, - նշում է Է. Տանանյանը:

21-րդ դարում արդյունավետ հաղորդակցումը կարևոր և առաջնային հիմնահարցերից մեկն է դարձել նաև բուհերում: Հարկ է նշել, որ առցանց շփմանն ու սոցիալաթակների կարևորություն տվող ուսանողները բախվում են լուրջ խնդիրների: Վերջիններս քերականական-տեսական գիտելիքների առկայության պարագայում անգամ չունեն բանավոր հաղորդակցման հմտություններ ու կարողունակություններ, հանպատրաստից չեն կարողանում արտահայտել իրենց անձնական տեսակետն ու կարծիքը, դժվար են մասնակցում քննարկումներին ու բանավեճերին, չունեն գրագետ ու կիրթ խոսք կառուցելու կարողություն, իսկ շնորհանդեսներ ներկայացնելը շատերի համար դառնում է բարդ առաջադրանք: Բոլորս էլ գիտենք, որ գործարար աշխարհում զգալի հաջողությունների հասնում է նա, ով բացի իր մասնագիտական գիտելիքներից տիրապետում է բանավոր խոսքի հմտություններին, ավելի ճիշտ է կարողանում ներկայացնել իրեն և իր գիտելիքները: Այս առիթով Դեյլ Քարնեգին նշում է. «Ելույթ ունենալու կարողությունը հոչակավոր դառնալու ամենակարճ ուղին է: Այն մարդուն պահում է ուշադրության կենտրոնում և մի գլուխ բարձրացնում է ամբոխից: Իսկ նրան, ով կարողանում է լավ խոսել, սովորաբար վերագրում են այնպիսի արտասովոր հատկություններ, որոնցով իրականում նա օժտված չէ»²:

Կարևորելով վերոնշյալը՝ բուհում մի շարք մեթոդներով գրավոր խոսքին զուգընթաց զարգացվում են բանավոր խոսքը և արդյունավետ հաղորդակցվելու

¹ Տանանյան Է., Հաղորդակցման հմտություններ, Երևան, 2012, էջ 87:

² Քարնեգի Դեյլ, Ինչպես ձեռք բերել բարեկամներ և ազդել մարդկանց վրա, Երևան, 1991, 12-13 էջ:

կարողությունը: Խոսքաշենության ունակության ձևավորման հիմքը դրվում է դպրոցում, ամրապնդվում է ավագ դպրոցում կամ քոլեջում, իսկ մասնագիտական գրագետ խոսքի կառուցումն ու բառապաշարի զարգացումն իրականացվում է բուհում: Դասավանդելով առաջին կուրսերում և ներկայացնելով հայերենի ներկայիս վիճակը որպես ոչ մասնագիտական առարկա՝ պետք է փաստենք, որ ուսանողները շատ են դժվարանում բանավոր հաղորդակցվելիս և մասնագիտական գրագետ խոսք կառուցելիս:

Այսպիսով՝ ելնելով վերոնշյալից դասախոսների առջև խնդիր է դրվում՝ ինչ ուսուցման մեթոդներ են պետք կիրառել դասագործընթացին՝ ուսանողների և՛ մասնագիտական բառապաշարի, և՛ խոսքային հմտությունների զարգացման համար: «Գոյություն ունեն խոսքի զարգացման տարբեր հայեցակարգային մոտեցումներով ստեղծված ծրագրեր և ձեռնարկներ, որոնց հիմքում հիմնականում ընկած են խոսքի բաղադրիչները՝ բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն: Սակայն գաղտնիք չէ՝ կարելի է ունենալ հարուստ բառապաշար, իմանալ տվյալ լեզվի քերականությունը, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին, սակայն չունենալ գրագետ, տպավորիչ, համոզիչ, արտահայտիչ խոսք, եթե չունենք հարուստ, բազմակողմանի զարգացած ներաշխարհ և հաղորդակցվելու ցանկություն»³,-իրավացիորեն նշում է Ջ. Գյուլամիրյանը՝ իր գրքում ներկայացնելով մի շարք գործնական առաջադրանքներ, որոնք նպաստում են բանավոր խոսքի զարգացմանը:

Դիտարկենք տնտեսագիտական ֆակուլտետներում դասավանդվող հայերենի՝ որպես ոչ մասնագիտական առարկայի ուսուցման մեթոդաբանությունը խոսքի զարգացման համատեքստում: Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը տնտեսագիտական ֆակուլտետներում կարևոր գործընթաց է, որն իրականացնում է հայոց լեզվի մասնագետը «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», «Հաղորդակցման հմտություններ» առարկաների շրջանակներում: Տնտեսագետների մասնագիտական գործունեության մեջ կարևոր դեր ունեն բանավոր խոսքն ու հաղորդակցումը: Տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար կարևորվում է նաև մասնագիտական բառապաշարի ուսուցումը: Դասախոսն իր առջև խնդիր է դնում տնտեսագետ ուսանողին ծանոթացնել տերմինի սահմանմանը, տերմինահամակարգերի տարբերակմանը, տերմինաբանական տեղաշարժերին, տերմինների արտասանական և բառային նորմերին⁴:

Նախևառաջ նշենք, որ ավանդական ուսուցման մեթոդներից կարևորում ենք **խոսքային և գործնական մեթոդները**⁵: Ավանդական մեթոդների կողքին ժամանակակից և նորարարական մեթոդները ևս նպաստում են ուսանողների բանավոր խոսքի զարգացմանը: Զննական մեթոդներից դասի ժամանակ կիրառվում է դիտ-

³ Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում, Երևան, 2004, էջ 3:

⁴ Տե՛ս Ղարսյան Աննա, Տնտեսագիտական բառապաշարի դասավանդումը լեզվաբանական մեթոդաբանությամբ / դասախոսություններ /, Երևան, 2023:

⁵ Ղուլումյան Գ., Մանկավարժություն, Գիրք 1, Երևան, 2005:

ման մեթոդը և նրա տարատեսակները: Այս մեթոդի նպատակն է զգայական և զննական ուղիով ուսուցման օբյեկտներին սովորողներին ծանոթացնելը, որն ավելի ազդեցիկ է և անմիջական: Խոսքային մեթոդները ևս լայն կիրառություն ունեն: Բերենք մի օրինակ, որը կիրառում ենք ՀՊՏՀ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի դասապրոցեսի ժամանակ: Նախապես հանձնարարվում է որևէ պատմվածք հայ կամ համաշխարհային գրականությունից: Ուսանողները դասախոսի օգնությամբ բանավոր վերլուծում են պատմվածքը, արտահայտում իրենց տեսակետն ու անհատական կարծիքը: Դասախոսը նախապես տալիս է պատմվածքը վերլուծելու սխեման, որի շուրջ ծավալվում է երկխոսություն, քննարկում: Իհարկե, նպատակահարմար է հաշվի առնել ուսանողակենտրոն մոտեցումը, երբ ավելի շատ մասնակցում են ուսանողները, կատարում են վերլուծություն, արտահայտում են իրենց մտքերը, իսկ դասախոսը վերահսկում է գործընթացը՝ կատարելով ուղղումներ և ապահովում գրագետ, կիրթ ու անսխալ հայերենի վերարտադրումը: Խոսքային մեթոդների ժամանակ կարելի է օգտագործել դիտողական պարագաներ: Բանավոր խոսքի զարգացման համար խոսքային մեթոդների արդյունավետության կարևոր պայմաններից են խոսքի մատչելիությունը, գրական նորմերին ու կանոններին համապատասխանելը, արտահայտչականությունը, տրամաբանվածությունը և խոսքի ճշգրտությունը: Գործնական մեթոդների գործածումը հայերենի դասերին ապահովում է ձեռք բերած գիտելիքի և խոսքային կարողությունների կիրառման կատարելագործումը: Բուհում արդեն տեսական-քերականական գիտելիքներ չեն տրվում, դասախոսը չի կրկնում դպրոցում անցածը: Ուսանողները հիմնականում այնպիսի գործնական առաջադրանքներ են կատարում, որոնք ուղղված են գրագետ, կիրթ, անսխալ, հայեցի խոսքի ձևավորմանը: Դրանք են՝ բառաձևի, բառագործածության, կապակցական, քերականական սխալներ, օտարաբան կառույցներ, ճիշտ և սխալ ձևեր⁶:

Գործածվում են նաև վերարտադրողական և ստեղծագործական մեթոդները: Ստեղծագործական մեթոդները նպաստում են ինքնուրույն խոսքային հմտությունների, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու ձևավորմանը: Խմբերում հանձնարարվում է տնտեսական խնդիրների վերլուծություն, տնտեսական սցենարների մոդելավորում (բանակցություններ), հայտնի տնտեսագետների, գործարարների ելույթների վերլուծություն՝ քննարկելով ուժեղ և թույլ կողմերը, խոսքային և ոչ խոսքային հմտությունները: Այսօր ժամանակակից կրթության պահանջներն այլ են, հիմնվելով ավանդական մեթոդների վրա, չենք կարող անմասն մնալ ակտիվ մեթոդներից: Ակտիվ մեթոդները կիրառվում են ավանդական մեթոդներին զուգահեռ: Այս մեթոդն ակտիվորեն զարգացնում է ուսանողների քննադատական մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, ստեղծարարությունը, հաղորդակցական ոլորտի զարգացումը: Դասագործընթացում ակտիվ մեթոդներից կիրառվում է երկխոսությունը, քննարկումները տարբեր թեմաների շուրջ: Այդ ժամա-

⁶ Ղարալյան Ա . , Երկանյան Ա . , Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2024:

նակ ավելի շատ ակտիվ են ուսանողները, արտահայտում են իրենց մտքերն ու տեսակետները: Կիրառելի է նաև բանավեճը, հարցազրույցն ու թիմային աշխատանք, որը լսարանում մեծ հաջողություն է ունենում: Ուսանողները մեծ բավականությամբ և հետաքրքրությամբ են կատարում հետևյալ առաջադրանքները:

Օրինակ՝ «Վարժ. 119. Ձևավորել թիմեր, տեսանկարել 1,5-2 րոպե տևողությամբ գովազդային հոլովակ և ներկայացնել՝ 1. ձեր հիմնած բիզնեսը կամ հայկական որևէ արտադրանք, 2. որևէ ապրանքանիշ՝ պահպանելով մարքեթինգային ռազմավարության հիմունքները»⁷: «Վարժ.120. Ձևավորել թիմեր, կազմակերպել աշխատանքի տոնավաճառ՝ ներկայացնելով հայկական կազմակերպություններն ու թափուր աշխատատեղերը»⁸: Ուսանողների լեզվամտածողության, ինչպես նաև բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են ճարտասանական գիտելիքներն ու դրանք գործնականում կիրառելու կարողությունները, որոնք ուսանողներին անհրաժեշտ են ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնական կյանքում: Այդ իսկ պատճառով, համալսարանները պետք է անեն առավելագույնը՝ այն ներառելու իրենց ուսումնական պլանում և ծրագրերում:

Այսպիսով՝ ուսուցման գործընթացում կիրառելով վերոնշյալ մեթոդները՝ ուսանողները կարող են զարգացնել արդյունավետ հաղորդակցվելու հմտություններն ու դառնալ համոզիչ հաղորդակիցներ:

МЕТОДОЛОГИЯ РАЗВИТИЯ УСТНОЙ РЕЧИ: ВЫЗОВЫ И РЕШЕНИЯ

Ключевые слова: *армянский язык, устная речь, традиционные методы, коммуникация, активные методы, навык, преподавание.*

В данной статье исследуются актуальные проблемы и особенности развития устной речи, значение и роль навыков коммуникации на экономических факультетах. Выявляются существующие проблемы и предлагаются решения с использованием различных методов и практических заданий. В статье представлена методическая система развития устной речи в процессе преподавания армянского языка, роль и значение традиционных методов обучения. Помимо традиционных методов, представлены также активные методы обучения, соответствующие современным требованиям в сфере образования. Приводятся примеры практических заданий, способствующих развитию речевых навыков, а также креативного и критического мышления. Применение указанных методов на уроке армянского языка способствует закреплению знаний и совершенствованию речевых навыков.

METHODOLOGY OF ENHANCING SPEAKING SKILLS: CHALLENGES AND SOLUTIONS

Keywords – Armenian language, speaking skills, traditional methods, communication, active methods, skill, teaching.

⁷ Նույն տեղում, էջ 106:

⁸ Նույն տեղում, էջ 106:

The paper explores current issues and specific features of developing speaking skills, as well as the importance and role of communication skills in faculties of economics. The existing problems are identified and solutions are proposed through the use of various methods and practical assignments. The paper presents a methodological system for enhancing speaking skills while teaching the Armenian language with the application of traditional teaching methods. Besides traditional methods, the paper also presents active teaching methods that meet present-day requirements in education. Examples of practical assignments are provided that contribute to the development of speaking skills, as well as creative and critical thinking. The application of these methods in Armenian language class contributes to the reinforcement of knowledge and the improvement of speaking skills.